



Ա Բ Ա Բ Ա Ս

ԹԻՒ Բ. — ՇՐՋԱՆ. ԻԱ. 1889

ՏԱՐԻ ԻԲ. ԹՊՈՎԱՆՈՒ ՅՆ

ԿՐՈՆԱԿԱՆ



Թէ ԻՆՉՊԵՍ է ԴԱՑՈՒՄ ԱՍՑՈՒԱԾ ԱՇԽԱՐՀԻՄ ԱԶԳԵՐԻՆ.

Ա. Ֆառա.

Արդարութիւնն ազգին բարձրացնում է : քայլ մեղքը ժողովուրդների անարդանքն է : (Առակ. Սովոր. ԺԴ. 34):

Ժամանակն է : որ անուշագիր չի լինիք ու լաւ՝ մտածենք Աստուծոյ դատասաանի վրայ : որ անում է աշխարհիս ազգերին : — Անզօր մարդիկը չեն : որ դիւթում են աշխարհ աւերսղ

սարսափելի մրրիկներին։ Մարդիկ չեն պատճառն այդ պիսի մրրիկների բարձրանալուն ։ Հատ վաղուց անց կացած ժամանակներին են յղացել ու ծնել հասարակոց թշուառութիւնն։ ալէ կոծուած համաշխարհական ծովն իւր ալիքները հասցնում է վերջապէս մինչև իւր ամենահեռաւոր ափերն։ այսպէս էլ մեր օրերի մէջ պատահածները մեր դարու վերջումն անգամ իրանց անդրադարձ ներգործութիւնը կունենան։

Ժամանակն է, որ մենք մեր ազգը՝ պատերազմի դաշտի մէջ թափուած արիւնից, այրուած տեղերից, կողոպառուած քաղաքներից, ժանտախտով վարակուած երկիրներից վեր բարձրացնենք գէպի նաև առանց որոյ կամաց ոչինչ չէ լինում։ Յիսուսի կրօնն է պահանջում մեզանից այս բանն։ Զօրքերի յաղթելն ու յաղթուիլն, ազգերի ջանքերն ու ձգտումները, թագաւորութիւնների և իշխանութիւնների միմեանց հետ ունեցած յարաբերութիւնները, մինչև անգամ իրանց կապած պայմաններն, իրանց դրած օրէնքներն, իրանց արած կարգադրութիւնները՝ ճշմարիտ քրիստոնէի կրօնական ուշադրութեան առարկաներ են։ Պատճառ որ՝ ինչպէս օդը պատում է երկրագունդս, այնպէս էլ կրօնն իւր այն ակնարկութիւններովն, որով շատ ու շատ բան է մեզ հասկացնում։ իւր այն պարտաւորութիւններովն, որ դնում է մեզ վրայ, իւր մէջն է պմրունակում ամեն բան, ինչ որ աշխարհիս վրայ վերաբերում է մարդուս։

Լաւ ուշագրութեան արժանի բան է, որ ես՝ իմ միայնակ եղած միջոցիս՝ Աստուծոյ և մարդոց լնդունելի մտածողութեանս րոպէններում։ ի՞մ ազգիս ունեցած վիճակի վրայ էլ մոտածեմ։ որպէս և այն դատաստանին վրայ, որ Ստեղծողս նրա համար արել է։ Զէ՞ որ ես էլ այդ ազգի մի անգամն եմ։ ու սերտ կապով կապուած նրա հետը հայրենիքով, կեանքիս մէջ ունեցած վիճակովս, և արենակցութիւնովս։ Ո՞վ կարող է այդ միջոցումն էլ չմտածել և անտարբեր ու անհոգ մնալ։ Ո՞վ կարող է հասարակաց չարն ու բարին իրանն էլ չհամարել։

Ժամանակն է, որ մտիկ տամ Աստուծոյ դատստանի վրայ, օրուայ մէջ պատահած իրոպութիւններից բան հասկանամ, և

այն, ինչ որ տեսնում եմ եղած ու կատարուած, նուրբ կերպով քննեմ։ Ժամանակների մէջ պատահածն ու եղած ամեն մի քանը՝ ջոկ ջոկ քննելու համար՝ պէտք է, որ ոչ մի բան աչքից չփափցնեմ, այլ ամեն իրողութիւններն էլ ամբողջապէս մըտքավ տեսնեմ ու հառկանամ, որ ծուռ ու սիւլ դատողութիւններ արած յլինիմ։ Բայց կրօնն է, որ այդ տեղ պարզեւում է ինձ կեանքի ամեն բաների համար ամենաբարձր տեսակէտու, ինչու որ մարգուած հոգին աշխարհից բարձրացնում է ու կապում Աստուծոյ հետ, որ բոլոր էակներից գերագոյնն է։ Ով որ խառն ու կնճռառ իրողութիւնների մէջ եղած, պատահած բաների վրայ դատողութիւն է անում անմիջապէս առանց տչքի առաջ ունենալու անց կացած ժամանակն, որից առաջ է եկել ներկան, այն մարգն օրուան խառնակութիւնների մէջ չափից գուրս անմիջաբար մի բան է տեսնում։ Նա չարի, փորձանքի վերջը չի կարողանում տեսնել, և արիւնաներկ հանելուկների բանալին չի գտնում։ Պատահմունքների յորձանքից ամեն կողմ տարաբերւում ու պտոյտ է գալիս, ոյժից ընկնում է, մաքառելով ալիքների հետ, աննպատակ, անյոյս և անվստահ ինքն իւր վրայ, տեսնում է միայն ջրի պտոյտքի անդունդքը, բայց ոչ ափը։ Չի իմանում ինչ միջոց գտնի իրան փրկելու, իրան հանգստացնելու։

Ժամանակն է նկատելու Աստուծոյ դատաստանն, որ աշխարհիս պատմնութեան մէջ տեսնում ենք։ Նրա համար եմ այս ասում, որ ազիտութիւնն ու կրքերը չեն թողնում, որ ճըշմարտութիւնն, ինչպէս որ է իրօք, պարզ մեր աչքի առաջ գայ, այլ մութ են ցոյց տալի մեզ։ Մարդիկն՝ իրանց անմիտ կարծիքովն, որ ունին իրանք իրանց վրայ, բաւական շատ անգամ երեակայում են թէ՝ իրանք են, որ այս ամեն պատահած բանն առաջ են բերում։ Իրանք իրանց աստուածների տեղ են դնում։ Եթէ սաստիկ ուրախանում են մի յաղթութեան վրայ, իրանց զօրքերի քաջութեանն են վերագրում և իրանց զօրապետների մեծ խելքից։ ախ՝ նրանք չեն իմանում հանգամանքների հիւսուածն՝ կամ իրար հետ ունեցած կապն, որ նախախնամութեան ամենակարող ձեռքին է։ Մի աննշմարելի՝ սննշան

բան՝ կարող է որոշել ամենամեծ պատերազմների հետեւանքն, ամբողջ ազգերի բաղդան ու անբաղդութիւնն, Գոռող յաղթականներն իրանց անյաղթ են համարում ու մոքներովն ոնց չի կենում, որ հենց էգուցուայ օրն ամեն բան կարող է շուռ տալ, ու բոլորովին ուրիշ կերպ փոխել, ինչու որ տեղի մի բարձր եւակ յաղթողների ու յաղթուածների համար ուրիշ պիճակ է որոշել.

Զէ, այ կուրացածներ, ինչ որ դուք տեսնում էք, մորդոց գործ չէ, այլ Աստուծոյ արած դատաստամնն է ազգերի վրայ, ինչպէս որ ամեն մի մասնաւոր մարդ իւր կեանքի ջոկ ընթացքն ունի, այնպէս էլ ամեն մի ազգ իւր ջոկ վիճակն և նշապէս որ ամեն մի առանձին մարդ՝ իմաստութիւնով, չափաւորութիւնով, աշխատասիրութիւնով՝ և արդարութիւնով՝ կամ՝ անխարդախ գործունէութիւնով բաղդաւոր է լինում, արսպէս էլ ամբողջ մի ազգ իւր առաքինութիւնովը կարող է և պէտք է բաղդաւորուի, իսկ իւր ունեցած պահասութիւններովն ու սխալանքներովն՝ անբաղդանայ, Մի ազգ, թէև ուրիշ ազգերի հետ հաղորդակցութիւն ու կապ ունենալով է աղջում, ինչպէս որ ամեն մի մարդ էլ՝ ուրիշ մարդոց հետ յարաբերութիւն ու կապ ունենալով, այսպէս առենք, նրա մէջն ու հետին է ապրում, բայց իւր համար մի ամբողջութիւն է կազմում, ուրախանում է ու ցաւ քաշում իրեւ մի ամբողջութիւնն, Առա համար իւր արած լաւ գործերի համար վարձատրվում է իւր մէջն՝ և իւր յանցանքների համար՝ իւր մէջը պատժուում՝ Աշխարհիս մէջ՝ մարդկային կեանքի ընթացքում՝ ոչ մի լաւ բան չէ լինում, որ իւր օր հնապեր հետեւանքները չունենար, և ոչ մի վատ բան, ոչ մի անարդարութիւն չէ լինում, որ իւր վնասակար ներգործութիւնը չթողնի իւր հետեւից, Ինչու որ աշխարհիս վրայ ամեն բան՝ թէ ամենամեծ և թէ ամենափոքր բաններ կապուած են միմեանց հետ՝ պատճառների ու հետեւանքների մշտական կապով, Մի վատ ծառ չի կարող լաւ պրտուղ բերել, և ով որ ցորեն է ցանում, փուշ յի հնձիլ:

Տէրութիւնների ըսլոր իմաստութիւնն, ազգերի բոլոր քաղաքագիտական խելքը՝ սուրբ գրքի այն քիչ խօսքերի մէջն է թէ՝

• աղբարան-նե-նն է աղբը բարձրացնում, իսկ միդու ճարտոց կարուսափն է . . . Արդէն հազարաւոր տարիներից առաջ այդ անցեղի ճշմարտութիւնն աշխարհիս առուած է . արդէն հազարաւոր տարիներ են, որ տատուածային գրքի այս խօսքն՝ ազգերի պատմութիւնը հանդիսաւոր կերպով ապացուցել ու հաստատել է, մեր առաջը գնելով սարսափելի իրողութիւններն, որ կատարուած են, և այդ անհերթելի վկայութիւններով ցոյց է տուել թէ ինչպէս և ինչից է եղել, որ նրանք ունեցել են իրանց ծաղկած ու փառքի մէջ եղած օրերն, և ինչպէս կամ ինչիցն է եղել նրանց ընկնելն, անարդ վիճակի համելը, կորելլու Բայց այսօր էլ գեռ կամ մարդիկ, որ այս հաստատ, ստոյգ, անհերքելի ու պարզ խօսքի վրայ ծիծաղում են. այդպիսիներին անցած ժամանակն զուր է իւր ազգարարութիւններավն զգուշացնում: Այս տեսակ մարդոց համար պատմութիւնը չեղած մի բանի է նման. մինչգեռ ամէնից առաջ հենց սրանք պէտք էր լինէին, որ պատմութիւնն ընարէին իրանց համար ուսուցիչ ու դաստիարակ:

Աղբարան-նե-նն է աղբը բարձրացնում, ոչ թէ մեծերի քաղաքագիտութիւնն, ոչ թէ իրանց զօրքերի բաղմութիւնն, ոչ թէ երկրի հարսութիւնն, ոչ թէ շատ տեղ տարած ուած առուատ ըն և արհեստների ծաղկած վիճակն, ոչ թէ պատերազմի ու խաղաղութեան համար բանուգնացութեան օգտաւէտ արդիւնքն և ապահովութեան հետեանիքն: Ո՞վ կարող էր պնդել, որ մի հասարակ խելքի ու մարքի տէր մարդ՝ իւր մտածողութեան կերպումն իւր բոլոր խելքի ուժովը՝ կամ իւր ունեցած հարստութիւնովն իսկապէս բազգաւոր և պատուելի մարդ կարող է դառնալ: Իւր խելքը, հաշուի չքերելու պատահմունքների անակնունելի կերպով մէջ ընկնելալը, կարող է խայտառակուել, իւր կարողութիւնն՝ անզգոյշ առուտուրով, կամ շռայլութիւնով կարձ ժամանակուայ մէջ փյանալ, բոլոր արտաքին իւր գերազնցութիւններն ոչնչանալու այն ժամանակ նա այլ ևս բաղդաւոր կամ պատուի տէր կրինի՞ ու կմնայ:

Մեծերի քաղաքագիտութիւնն՝ արդարե՝ կարող է մի երկիր մի քանի տասնեակ տարիներ բազգաւոր վիճակի հասցրած լինել. բայց եթէ ազգի մէջ էլ չկոյ հսգւոյ մի ներքին բարձր

ոյժ այնօամեն բանի համար, ինչ որ լաւ է և ուղիղ, ոյն ժամանակ կառավարիչների ջանքն ու աշխատութիւնները քիչ պտուղ կրերեն: Այս էլ կայ, որ մի պատուական թագուարի մեծ հոգւոյ տէր կամ բաղդաւոր լինելը ժառանգական չէ իրանից յետոյ իւր տեղը նստողների համար: Սրանիցն է, որ մէկի բանեցրած քաղաքագիտական հնարքները՝ միւսները այքի առաջ չեն ունենում՝ կամ իրանց աչքից փախցնում են: մէկի ձեռք բերած միւսները փչացնում են: — Եւ ինչի՞ վրայ է, սովորաբար, բոլոր իշխողների հնարագիտութիւնն, սրոնք որ իրանց խելքովը մոքներաւմը դնում են մի ազգ բարձրացնելու: Արդեօք ազգի խոկան բարօրութեան վրայ են մոտածում վարք ու բարքի պարզութիւնն առաջ տանելու վրայ, կամ հասարակաց առաջինութեանց, ազատութեան, իրաւունքի զգացմունք ունենալու, անկաշառութեան, հայրենասիրութեան իսկական արժանիքը ճանաչելու վրայ: Կամ շատ անգամ նրանց միտքն աւելի այն չէ՝ արդեօք, որ իրանց երկիրը մեծացնեն, իրանց իշխանութիւնն աւելի տարածեն, աւելի մեծ եկամուտներ, աչքի ընկնող փառք ու փայլ ունենան, կամ աշխարհակալի տնուն սուանան:

Աղջը բայց այսուհետու է միայն արդարա-նիւնը, — ոչ թէ զօրքի գընդերի ոյժն ու շատաւթիւնը, կոմ' նրանց յաջողութիւնը, ճարպիկութիւնն ու քաջարստութիւնը: Թէև՝ ինչպէս որ ամեն մի մարդու ունիցած մարմնոյ ոյժն՝ իրան ուրիշների առաջ գերազանցութիւն է տալիս և ապահովութիւն, այսպէս էլ զօրքի ոյժն ու քաջութիւնը մի անհրաժեշտ կարիք է այն երկրի համար, որ իւր ազատութիւնն ու անկախութիւնն պիտի ապահովայնի: բայց լոկ զէնքի ուժը չի կարող մի ազգ բարձրացնել՝ կամ բաղդաւորացնել: այլ միայն շատ հեշտ կերպով կարող է ի չարն գործ ածուիլ՝ աւելի մեծ պատուի տիրանալու համար, կամ աշխարհակալութեան սէր վառել նրանց մէջ՝ և ուրիշների խաղաղութիւնը վրդովել: Մի պատերազմասէր ազգ երբ է առաջ տարել աշխարհի բաղդաւորութիւնն: Եւ այդպիսի մի ազգ որչափ ժամանակ է այդ իւր ոյժն ու իւր անունն աւնիցել: Մինչեւ տնդամ չոռովմը, բոլոր աշխարհիս կէսը նուա-

ճեղուց յետոյ, պէտք էր ընկնէր, կորչէր։ Այս էլ ասենք, որ պատերազմասէր ազգերի շատ մեծ ուժերն էլ, երկար ժամանակ լարուած լինելուց, վերջապէս թուլանում են, կամ տէար առած գտնձեր վայելելովն, իրանց փափկասէր կեանքովը տկարանում են ու թուլամորթ մարդիկ դառնում։ Այն ժամանակ ամենատկար և անզօր ազգերն էլ վերջապէս ոիրտ են տռնում։ որ վրէ ժինդիր լինին և իրանց ազատութիւնը կրկին ձեռք բերեն։ յուստհատութիւնը հերոսական քաջութեան է տանում նրանց ու յաղթում են՝ յաղթութիւններ անելու ամենասովոր զօրքերին։

Միայն արդարութիւնն է մէ առք բազմացնուած։ — ոչ թէ հարստութիւնն, արհետոներն ու վաճառտկանութիւնն։ Ինչպէս որ ամենայետին աղքատութիւնն ու չափից գուրս հարստութիւնը միենայն կերպով վաճանդաւոր են մի ընտանիքի համար, ինչու որ թէ նրանք և թէ սրանք իրունց սրտի ոյժը կորցնում են, նոյնն է և մի ազգի համար։ Ամենահարուստ ազգերը քանդուելու, փչանալու միշտ շատ մօտիկ են եղել։ Հարստութեան մէջ լող տալն՝ ուժից քցել է իրանց, թուլացրել, աւելի անհոգ կեանքի տարել՝ ու փչացրել իրանց վարք ու բարքն։ Ով որ, լիութեան և առատութեան մէջ ասդրելով, միանգամ գերի է գարձել լաւ ուտել՝ խմելու, լաւ հագնելու և ամեն կերպով փառաւոր կեանք անց կայնելու պահանջներին, նրա համար վայելչութիւն քաշելը, շատ աւելի մեծ տեղ և աւելի արժէք ունի, քան թէ առաքինութիւնը։ Փափուկ, քնքուշ կեանք անցկացնելը նրա համար աւելի լաւ է, քան թէ ազատութիւնն, ազատ կեանքն, ոչ ոքից կախում չունենալն, կամ ոչ ոքի իշխանութեան տակ լինելն։ Այսպէս փչացան հին ժամանակի շատ նշանաւոր ու շատ հարուստ տէրութիւնները։ Բաւական ազգերի արեան ճակատագրական շրջանառութիւնն այս է՝ որ նրանք աղքատութիւնից ու երկիւղից՝ վառանգների առաջ քաջանում են և քաջութիւնով պատերազմասէր ու հնարագէտ են գառնում, աշխարհակալութիւնով ու վաճառականութիւնով հարստանում են, որ յետոյ՝ զեղի, կեանք անցկացնելով, վերջապէս ուժից ընկնեն, թուլամորթ և

անզօր ազգ գաւռնան՝ և ուրիշների իշխանութեան տակն ընկնեն։

Ինչու որ մէջուլ հարդոց կորսուանքն է։ Ազգերի մեղքերն այստեղ են յառաջ գալիս, ուր որ Աստուծոյ երկիւղը պակսում է՝ և ինքնասիրութիւնը զօրանում և իշխում։

Դեռ ոչ մի ազգ չի կորել կրօնասիրութիւնից. իսկապէս կրօնասէր ազգն արդար և ուղիղ բանն է սիրում՝ ու վստահ լինելով, որ ծուռ բան չի բռնում, ուժեղ է և զօրաւոր. իւր երկրի օրէնքներին և իշխանաւորներին ամենահնագոտնդ է, դրոի երկրների հետ իւր կապած պայմանին ամենահաւատարիմ։ Սորա համար էլ ուրիշ ամեն ազգերի աւագն պատահ ունի ու վայելումէ նրանց յարգանքը, Բայց երբոր մի ազգ, իւր սուտ ու ծուռ լուսաւորութիւնովը, կորցնումէ իւր ունեցած կրօնի զգացմունքն՝ ու իւր որտի աւագնուան անկեղծ հաւատին անհաւատարիմ է լինում, հեռանում, օտարանում է եկեղեցւոյ սեղաններից իրեւ մի ապստամբ՝ և մարդ կային ազգի սուրբ տաճարների դէմ կեղառա բերան բաց անում, ինքն իրան փչանում է իւր անբարդյականութիւնից։ Օրէնքները զուր են օրէնք ծաղրող սրտի համար. միայն դրաից՝ երեսանց պատշաճը պահելու չափ մի զօրութիւն կունենան, բայց՝ ազնուացնելու հոգի ներշնչել մարդու մէջ՝ չեն կարող, Աերջապէս այսպիսի մի երկրում ամեն մի մարդ ինքն է իւր աստուածն ու իւր աշխարհն. — ամենայն բան՝ ամենի կողմից՝ ամենի դէմ՝ մի ծածուկ պատերազմ է և հետեանքն այն է, որ կամ ջնջւում է աշխարհիս երեսից, կամ գերի գառնում ուրիշ ազգի։

Մէջուլ հարդոց կորսուանքն է. — Միաբանութիւնը գեռ ոչ մի ազգ չի փչացրել, աշխարհիս երեսից չի ջնջել, այլ այս՝ այն բանն, որ փաքր ու աննշան է եղել, մեծ ու վառաւոր բան շինել, Բայց երբ որ քաղաքացւոց անձնասիրութիւնն, ուզում եմ ասել, ոչ թէ բոլորի, այլ միայն իւր անձի շահն պտռելն է գեր խաղացել, երկիրն երկու կողմերի բաժանել ու բնակիչները միմեանց հետ անմիաբան, իրար հակառակ են գարձրել, որպէս իրանց ուժերը բաժան բաժան տրել, ահա այն ժամանակն է,

որ ամենի համար գերութեան շղթան շինուել է: — Վարքի ու բարքի անազարտ պահպանուելն՝ ոչ մի ազգի չի քցիլ անբաղդութեան մէջ, այլ փոքրիկ ազգերին էլ Հայրենասէր լինել է սորվեցրել ու զօրացրել, որ ամենայն նեղութիւնների դիմանան, և՝ այդպէս վարուելով, ամենամեծ վտանգների գէմ են դրել քաջութիւնով՝ ու յաղթել: Խոկ ընդհակառակն փափուկ կեանք անց կացնելը՝ լաւ ուտելու, լաւ խմելու, լաւ հագնուելու՝ և մինչեւ անգամ՝ անպատկան ու աններելի վայելցութիւններ քաշելու համար չափից գուրս ծախս անելը՝ հետն էլ չափից գուրս կարոտութիւն ու նեղութիւն քաշելն, ոչ թէ մի, այլ շատ անգամ՝ երկիրներն անքնակ են արել, ժողովրդի սրաիցն արիւն է գնացել, որ փչացան, կորան, էլ ազատուելու հնար չկայ իրանց թշուառութիւններից:

Այս է աշխարհիս յաւիտենական կարգը: — այս է Աստուծոյ արած դատապատանն ազգերի վրայ: Քո չորս կողմղ մտիկ տուր ու տես թէ՝ ինչպէս որ մի ազգի առաքինութիւնները մի ընդհանուր օրհնութիւն են բերում՝ ու տարածում՝ մինչեւ անգամ՝ մի անտամ մի անտառուածի տան վրայ, այնպէս էլ մի ազգի մեղքը՝ մեղքի անէծքը բերում է, տարածում նաև անտեղի տնակի վրայ: Այստեղ անմեղը պէտք է քաշի մեղաւորի հետ, ինչու որ ինքն էլ բոլոր ժողովրդի մի անդամն է:

Ես էլ մի ազգի անդամներից մէկն եմ, ամբողջի մի մասն եմ. միթէ կարող եմ անտարբեր մնալ, երբոր իմ քաղաքակիցների քաշածներն աշքովս տեսնում եմ: Ոչ մի ժամանակ: Ամեն մի մարդ պարտական է աւելի լաւ բանն անելու, ես էլ նոյն պարտականութիւնն ունիմ, չեմ կարող ասել թէ՝ ես ազատ եմ, ինձ չէ վերաբերում: Ամեն մի մարդ իւր տան մէջ, իւր քաղաքացիական հանգամանքի մէջ պէտք է նուիրի իւր հայրենիքին բոլոր իւր սիրան, և եթէ բանն այնտեղ հասնի, որ շատ աւելի մեծ զոհ պահանջուի իրանից, այն ժամանակը պիտի իւր սրտի արիւնն էլ չխնայի զոհելու: Ինչպէս որ մի ազգ բաղկացած է ջոկ ջոկ ընտանիքներից, այսպէս էլ ամբողջ ժողովրդի առաքինութիւնն ու արդարութիւնն և դրանցից յառաջ եկած բոլորի բարօրութիւնն՝ ամենի ունեցած առաքինու-

թիւնից ու բարօրութիւնից է միայն: — Եւ թէ ամեն սրտերը վառվում են քաջութեան սուրբ կրակով և հայրենիաց սիրոյն անձնանութիւնով. Եթէ որ ամեն մի մարդ օրինակ է տուլիս իւր մեծաւորներին և իշխաններին՝ հնազանդ լինելու, իւր եղբայրներին հաւատարիմ, նրանց հետ միաբան ու հաշա ապրելու իրանց ներքին կեանքի մէջ, ընտանեկան կեանքի մէջ էլ օրինակ է տալիս աշխատասիրութեան և վարք ու բարքի անսայթաք և անթերի մաքրութեան, ամենքն էլ փրկուած են:

Աստուած իմ և երկնաւոր Թագաւոր, որ Քո արած դատաստաններիդ մէջ մեծ ես, Քո մեզ համար սահմանած վիճակների մէջ էլ իմաստուն և բարերար. երանի կրնէր թէ, որ բաւական իմաստուն և բաւական քաջասիրտ լինէի և օրինակ կ լինէի ուրիշներին արդարութեան, ազնուասրտութեան և քաղաքական առաքինութիւնների: Ո՛չ, Քո շնորհքիցդ և օգնութիւնիցդ մի զրկիր ինձ, որ իմ կամքս ապարդիւն ու մեռած կամք յինի ու չմնայ: Քո սուրբ հոգւոյ զօրութիւնը կեանք ու կենդ անութիւն առյ ինձ ամեն մի բարի բանի համար. ամէն:

Գ. Ա. Ա.

ԿՐՈՒՆԻ ԴԱՍԱՑՈՒՈՒԹԻՒՆ

Ծխական — Եկեղեցական առաստիճաններս:

Նոր ծրագրով կրօնստոյցի վերայ դրվում է խիստ մեծ պարտաւորութիւններ, որ և միայն այն ժամանակ կը կարողանայ կատարել, երբ որ լաւ հասկանայ, թէ ինչ տարբեր դիրք ունի կրօնը միւս բոլոր ուսմունքների կարգի մէջ: Եթէ ուսուցիչը աւանդում է մի ուրիշ աւարկայ՝ զոր օր. լեզու, թուարանութիւն, երգեցողութիւն կամ այլ ուսմունք, նա այնպիսի քան է աւանդում աշակերտին, որ նորան տակաւին յայտնի չէր, որ իսկապէս նորա խելքի ու մոռքի համար անծանօթ նորութիւն է: Այս տեղ գլխաւոր խնդիրն է առասուցանել, այսինքն հաղորդել նոր տեղեկութիւն, նոր հմտութիւն, նոր կանոն,